

Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ

Յոպնան եւ մեծ
ձուկը



Written by: Edward Hughes

Illustrated by: Jonathan Hay

Adapted by: Mary-Anne S.

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

www.M1914.org

BFC

PO Box 3

Winnipeg, MB R3C 2G1

Canada

©2013 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.




Շատ տարիներ առաջ, Յովնան
կոչուած մարդ մը կ'ապրէր Իսրայէլի
մէջ: Օր մը Աստուած անոր
ըսաւ, որ Նինուէ երթայ,
ամենամեծ,
ամենահզօր


քաղաքը
աշխարհի:




Յովնան այդ տեղի ժողովուրդին
պիտի զգուշացներ, թե Աստուած
գիտէ, թե որքան գէշ
եւ չար են անոնք:




Յովնան Աստուծոյ
չինազանդեցաւ: Փոխարէն
Նինուէի, Յովնան նաւարկեց
հակառակ ուղղութեամբ դէպի
Դարշիշ:




ՏԷր Աստուած գօրաւոր հով մը դրկեց ծով: Սաստիկ
փոթորիկ կար: Նաւաստիները կը վախնային, թէ
նաւը կտոր-կտոր ըլլայ եւ ընկղմի:



Փոթորիկը անելի եւ անելի սաստկացաւ:
Սարսափած, նաւաստիները աղօթեցին Աստուծոյ
եւ ամբողջ ապրանքները ծով թափեցին, որպէսզի
թերեւցնեն նաւը: Սակայն բան մը չօգնեց:



Յովնան միակն էր նաւուն վրայ, որ չէր աղօթեր:
Փոխարէնը ան երկնցած հանգիստ կ'ըներ նաւուն
մէջ եւ խոր կը քնանար: Նաւուն հրամանատարը
գտաւ անոր. "Ի՞նչ կ'ընես. քնացիր ես": "Ոտքի'
ել: Աղօթք մը ըրէ Աստուծոյ: Թերեւս
Աստուած կը մտածէ մեր մասին,
որպէսզի չքնանանք":




Շուտով սաւաստիները գիտցան, որ փորձանքը
Յովնանին է: Անոց ըսեր էր, որ ինք Աստուծմէ կը
փախչի: Անոք հարց տուին. "Յետոյ ի՞նչ պետք է
ընենք, որպէսզի ծովը հանդարտի": "Առէք ինծի եւ
ծովը նետեցէք", ըսաւ Յովնան:

"Որովհետեւ ես վատահ եմ,
որ այս փոթորիկը
ինծի համար է":



Նաւաստիները
չէին ուզեր անոր
ծով նետել: Անոր
համար անոնք
շատ ճիգ թափեցին
նաւարկել դէպի
ցամաք, բայց
չկրցան: Միայն
մէկ բան
մնացած
էր ընելու:






Ներողութիւն
խնդրել եւ աղօթել
ետք, նաւաստիները
Յովնանին գրկեցին
եւ ջուրը նետեցին:
Յովնան կորսուեցաւ
ալիքներուն տակ,
ծովը հանդարտեցաւ
եւ փոթորիկը
կանգ առաւ:




Կլիմային
անակնկալ
եւ արագ
փոփոխութիւնը
աւելիով վախցուց
նաւաստիները, քան
փոթորիկը: Անոնք
գիտէին, որ միայն
Աստուած կրնայ ըրած
ըլլալ այդ: Վախով
եւ զարմանքով
Տիրոջ պաշտեցին:




Մինչ այդ,
անհնազանդ
Յովնանը մեծ
անակնկալ մը
ըրաւ: Առանց
որեւէ օգնութեան
ան կ'ընկղմէր
ծովուն խորերը,
Յովնան գիտէր,
որ մէկը չէր կրնար
զինք փրկել եւ ան
կը խեղդուէր: Ան
կրնար խեղդուիլ,
սակայն Աստուած
տարբեր ծրագիրներ ունէր:




Տերը մեծ ձուկ մը պատրաստել տուաւ, որպէսզի
կլլէ Յովնանին: Ձուկը ճիշդ ժամանակին հասաւ:
Մէկ անգամէն կուլ տալով եւ Յովնան
արդէն ձուկին փորին մէջն էր: Յովնան
ձուկին փորին մէջ երեք օր մնաց: Ան
երկար ժամանակ ունեցաւ, որ
մտածէ եւ աղօթէ:




Երեք օր ետք, վերջապես Յովնան Աստուծոյ
խոստացաւ հնազանդիլ: Անմիջապէս Աստուած
խօսեցաւ ձուկին եւ ան դուրս փսխեց Յովնան
դէպի ծովեզերք:




Անգամ մը եւս Աստուած ըսաւ Յովնանին, որ
երթայ Նինուէի եւ Աստուծոյ խօսքը քարոզէ:
Այս անգամ Յովնան գնաց: Յովնան մտաւ
քաղաքը, պռռալով. "Քառասուն օր ետք,
Նինուէն տապալեցաւ":



Նինուէի ժողովուրդը հաւատաց Աստուծոյ խօսքին:
Անոնք ծով բռնեցին եւ պատանէ հագուստներ
հագան ցոյց տալու համար Աստուծոյ, թէ որքան
զղջացած էին իրենց մեղքերուն համար, մինչեւ
իսկ թագաւորը խոնարհեցուց ինքզինքը Աստուծոյ
առջեւ: Ան իր գահէն վար իջաւ, պատանէ հագուստ
հագաւ եւ մոխիրի վրայ
նստաւ: Ան հրամայեց
բոլորին, որ իրենց գէշ
եւ սխալ ճամբաներէն
ետդարձ ընեն եւ
դադրին վայրագութենէ
եւ աղօթեն,
որպէսզի Տէրը
ներէ իրենց:



Աստուած ներեց անոնց: Շատ ուրախ օր մը պէտք
էր ըլլար Նինուէի մէջ երբ ժողովուրդը
անդրադարձաւ, թէ
Աստուած
ներեց
իրենց... քայց
մէկ անձ շատ
զայրացաւ:



Ինչո՞ւ Յովնան զայրացաւ:
Ան ըսաւ Աստուծոյ. "Ես
գիտեմ, որ դուն ուղիղ եւ
առատաձեռն Աստուած ես
եւ արագ չես բարկանար,
եւ բարի ես": Ուրիշ
խօսքերով, Յովնան
կ'անդրադառնայ իրենց
մեղքերուն եւ կը
հնազանդին Աստուծոյ
խօսքին: Այդպէս էր, որ
Յովնան չէր սիրեր
Նինուէի ժողովուրդը: Ան
չէր ուզեր, որ անոնք
ներում ստանան:



Յովնան այդքան զայրացած էր Աստուծմէ, ան
ըսաւ. "Կեանքս առ ինձմէ, որովհետեւ մահը աւելի
լաւ է քան կեանքը ինծի համար":



Յովնան քաղաքէն դուրս ելաւ եւ սպասեց, որ
տեսնէ թէ Աստուած հետը ինչ պիտի ընէ: Աստուած
թուփ մը պատրաստեց մեծ տերեւներով: Այդ թուփը
արագ մեծցաւ եւ Յովնան իր
շուքին տակ առաւ, տաք
արեւն ամեն օր:



Յաջորդ առտու Աստուած որդ մը դրկեց, որ
մեռցուց թուփը: Տերը նորէն տաք եւ զօրաւոր հով
մը պատրաստեց, որ փչեց Յովնանի վրայ մինչեւ
ան ենթադրեց, որ կը մեռնի: Այս բոլորը աւելի
զայրացուցին Յովնանին:



Յետոյ Տերը ըսաւ Յովնանի. "Երբեք
որեւէ իրաւունք ունի՞ս զայրանալու:
Դուն խղճացիր թուփին, որուն համար
ոչ յոգնեցար եւ ոչ ալ խնամեցիր:
Ան երեկոյեան բուսաւ եւ
երեկոյեան մեռաւ:



Ինչո՞ւ ես պիտի չգթամ Նինուէի
վրայ, այդ հզօր քաղաքին, իր
հազարաւոր ժողովուրդով:"



Յովնան եւ մեծ ձուկը


Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Յովնան

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Մադնոս 119:130





Կերջ

26

60



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի ղրկեց, որպէսզի էաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերէդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

